



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Փաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» դեկտեմբերի 2020թ. N^o 293

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
8-Ի ԹԻՎ 247 ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱԿԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 247 որոշմամբ Ալբերտ Արամայիսի Հովակիմյանին ներկայացվել է «CADILLAC FLEETWOOD 5.7L» մակնիշի (հաշվառման համարանիշ՝ 95ND500) փոխադրամիջոցի 2017-ից 2019 թվականների համար հաշվարկված գույքահարկի գանձման պահանջ:

Համաձայն տրանսպորտային միջոցի հաշվառման թիվ KB 220647 վկայագրի՝ Ալբերտ Արամայիսի Հովակիմյանին սեփականության իրավունքով պատկանող «CADILLAC FLEETWOOD 5.7L» մակնիշի (հաշվառման համարանիշ՝ 95ND500) փոխադրամիջոցը հանդիսանում է հատուկ տեսակի տրանսպորտային միջոց:

«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում փոխադրամիջոցները:

Փոխադրամիջոցների գույքահարկի դրույքաչափերը սահմանվում են «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, որով սահմանված չէ հատուկ տեսակի փոխադրամիջոցների գույքահարկի դրույքաչափը, և հետևաբար հատուկ տեսակի փոխադրամիջոցների համար գույքահարկի հաշվարկ հնարավոր չէ իրականացնել:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, 2-րդ մասով և 76-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 247 որոշումն ընդունելիս սխալ է կիրառվել «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և հիմք ընդունելով Ալբերտ Արամայիսի Հովակիմյանի վարչական բողոքը՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Ալբերտ Արամայիսի Հովակիմյանին գույքահարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին» թիվ 247 որոշումը ճանաչել անվավեր:



Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020 ղեկտեմբերի 11
ք. Սպիտակ